ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Պ-103.1-30.11.2021-ՊԻ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. ~~Հայաստանի Հանրապետության~~ 1998 թվականի հուլիսի 1-ի Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում (այսուհետ՝ Օրենսգիրք) լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 20.1-ին հոդված.

«Հոդված 20.1. Ոչ իրավաչափ վարքագծի արգելքը

1. Քրեական դատավարությանը մասնակցող անձինք պետք է իրենց իրավունքներից օգտվեն և իրենց պարտականությունները կատարեն բարեխղճորեն:

2. Արգելվում է իրավունքների չարաշահումը, որը վնաս է հասցնում այլ անձանց կամ արդարադատության շահերին:

3. Իրավունքների չարաշահում թույլ տված կամ պարտականությունները չարամտորեն չկատարած անձի նկատմամբ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում կարող է կիրառվել նրա վարքագծին համաչափ դատական սանկցիա, եթե այն չկիրառելը կարող է վտանգել վարույթի բնականոն ընթացքը:

4. Մեղադրյալի կողմից իր պարտականությունները չարամտորեն չկատարելու դեպքում նրա նկատմամբ կարող է կիրառվել խափանման միջոց կամ կիրառված խափանման միջոցը կարող է փոխարինվել այլ՝ առավել պիտանի խափանման միջոցով:»:

Հոդված 2. Օրենսգրքի 314.1-ին հոդվածի 1-ին մասում լրացնել նոր՝ 4-րդ կետ.

«4) իրավունքի իրականացման սահմանափակումը:»:

Հոդված 3. Օրենսգրքում լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 314.4-րդ հոդված.

«Հոդված 314.4. Իրավունքի իրականացման սահմանափակումը

1. Իրավունքի իրականացման սահմանափակումը անձի կողմից իր դատավարական իրավունքների պարբերաբար չարաշահման դեպքում դատարանի որոշմամբ դրանց իրականացման ժամանակային կամ քանակական պայմանների սահմանումն է:

2. Սույն հոդվածով նախատեսված դատական սանկցիան կարող է կիրառվել միայն հետևյալ իրավունքները պարբերաբար չարաշահելու դեպքում՝

1) միջնորդություն հարուցելը.

2) բացարկ հայտնելը.

3) քրեական գործին կցելու և հետազոտելու համար նյութեր ներկայացնելը.

4) քրեական գործի նյութերին ծանոթանալը և դրանցից ցանկացած ծավալի տեղեկություն դուրս գրելը.

5) ելույթ ունենալը.

6) պաշտպանից հրաժարվելը~~,~~.

7) պաշտպանի լիազորությունները դադարեցնելը:

3. ~~Որոշակի դատավարական իրավունքների~~ Իրավունքի իրականացման սահմանափակումը կարող է կիրառվել նաև դատավարական գործողությանը նույն անձի մի քանի պաշտպանի, ներկայացուցչի կամ փաստաբանի ներկայանալու դեպքում: Այդ դեպքում իրավունքի իրականացման սահմանափակումը դրսևորվում է տվյալ գործողությանը մասնակցելու հնարավորություն տալով ոչ բոլոր պաշտպաններին, ներկայացուցիչներին կամ փաստաբաններին:

4. Սույն հոդվածով նախատեսված դատական սանկցիայի կիրառումը չպետք է բացառի համապատասխան իրավունքի բուն իրացումը:»:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: